

ՆԱՄԱԿՆԵՐ, ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ПИСЬМА, ЗАМЕТКИ

Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆԻ «ՎԱՐԴԱՆԱՆՔԻ» ՁԵՌԱԴՐՆԵՐԸ

«Վարդանանքը», սովետահայ ականավոր գրող Դերենիկ Դեմիրճյանի գլուխ-գործոցը, միանգամից չի ստեղծվել: Թեև վեպի I և II գրքերը լույս են տեսել 1943—1946 թթ. ընթացքում, սակայն գրողի աշխատանքը այդ ստեղծագործության վրա տեղի է շուրջ 10 տարի: Դրա պատճառը միայն հեղինակի վատառողջությունը չէր, այլ պահանջկոտությունը իր դրածի նկատմամբ, վեպը առավել կատարյալ տեսնելու ձգտումը:

Մինչև վեպին վերջնական տիպար տալը Դեմիրճյանն ստեղծել է նախնական տեքստեր, որոնք մի քանի հազար էջ են կազմում: Նախնական ձևագրերը ցույց են տալիս, որ գրողը սկզբում թղթին է տվել իր մտքերը, իրեն հուզող նյութերը, դեռևս չմտահոգվելով նրանց մանրամասնություններով ու նրբերանգներով և աստիճանաբար, խորամուխ լինելով նյութի մեջ, նորանոր կողմեր ու ծալքեր է հայտնագործել:

«Վարդանանքի» ձևագրերի միայն մի մասն է պահպանվել: Սակայն այդ էլ որոշակի գաղափար է տալիս գրողի կատարած աշխատանքի ընդհանուր բնույթի վերաբերյալ: Դրանց մեծ մասը սեպագրություններ են, քանի որ ներկայացնում են վեպի վրա գրողի աշխատանքի նախնական փուլը: Վեպի ձևագրերը ինքնագիր են և հետևաբար՝ հավաստի: Ինչպես նախնական, այնպես էլ հետագա տեքստերը ուղղվել ու մշակվել են գրողի ձեռքով: Հաճախ ուղղումները նա կատարել է նույն տեքստի վրա՝ և՛ գրելիս, և՛ հետագայում, գանազան առիթներով: Այդ տեքստերի վրա, այսպիսով, երևում են գրողի նախնական և հետագա աշխատանքի հետքերը: Սկզբնական սևագրությունները երբեմն չունեն հետևողական շարադրանք, այլ գրառման տպավորություն են թողնում՝ հասկանալի միայն գրողին, և ըստ երևույթին ծառայել են գրելիքի նյութ նախնական ուրվագծի ձևով: Սեպագրությունների այդ նախնական նմուշներին հաջորդում են միջին տեքստերը, դրանք չեն կարող համարվել մաքրագիր, թեև դուրս են եկել գրառման վիճակից և ավելի մոտիկ են վերջնական տեքստին: Որոշ իմաստով դրանք կարելի է անվանել հեղինակային առաջին կամ երկրորդ վերջնաուղղումներ: Այս տեքստերը հեղինակային տարբերակներ ու խմբագրումներ են, որոնցից ծնվել է վեպի վերջնական և ամբողջական տեքստը:

Տեքստերի մի մասը ոչ թե ինքնագիր է, այլ մեքենագրված, սակավ դեպքերում՝ նաև արտագրված: Սակայն դրանք ուղղվել ու շտկվել են գրողի կողմից և կարող են համարվել հավաստի, հեղինակադրված (авторизованный), ինքնագրին հավասարազոր տեքստեր: Այդ քանին չեն խանգարում առանձին սխալներն ու վրիպումները, որոնք մեխանիկական բնույթ են կրում և հեղինակի անուշադրության հետևանք են: Բացի այդ, բուն ստեղծագործական պրոցեսում հեղինակը երբեմն ի վիճակի չէ տեսնել իր իսկ թույլ տված սխալները, իսկ ուրիշներին՝ մեքենագրողի, արտագրողի՝ առավել ևս: Բանասերները Գոգոլի և Ծոլստոյի հեղինակադրված ձևագրերում նշել են նման շատ սխալներ, որ թույլ են տվել արտագրողները: «Վարդանանքը» չի ունեցել մաքրագիր ձեռագիր տեքստ: Դեմիրճյանը սովորություն է ունեցել անընդհատ իր ձևագրերը շտկել և փոխել, հաճախ այդ աշխատանքը կատարելով նաև սրբագրական տպվածքների վրա:

«Վարդանանքի» ձևագրերի թվում են առանձին գլուխների, տեսարանների և հատվածների մի քանի տարբերակներ, մշակման փորձեր, պատահիկներ, այդ թվում՝ շինականների երդումը՝ կովել Հազկերտի դեմ, Դենշապուհի գրույցը հայ ավագանու հետ մերժողական պատասխանի վերաբերյալ, ատյանի նիստը, Արսենի և Խորիշանի հանդիպումը, Վարդանի ապրումները ճակատամարտից առաջ, հայ պատվիրակությունը Ելուզանդիայում և այլ մասերի տարբերակները:

Ձևագրերի մեջ գտնում ենք նաև «Հեղինակի կողմից» առաջարանը¹, որտեղ գրողը խոր-

¹ Տե՛ս Դրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Դեմիրճյանի ֆոնդ, № 456:

Հրդեհածում է ժողովուրդների, այդ թվում՝ հայ ժողովրդի ազատագրական պայքարի ու հերոսականության մասին, որը նրան ոգեշնչել է գրել «Վարդանանքը»։ «Ես ևս երգեցի—ուժեղ, թեթույլ, հոգ չէ, Վարդանանց երգը,—գրում է Դեմիրճյանը,—որը և նվիրարենում եմ բոլոր աղատագրված, ազատագրվող և ազատագրության դաշտին ոտը դնելու սպասող բոլոր ժողովուրդներին... Արյունը թանկ է և իմաստուն հեղուկ։ Ուժեղ է։ Նրա առաջ լուռ է ամեն փաստարկություն։ Արյունը համոզում է միշտ։ Եվ հերոսությունը հարգվում է ու երգվում, որովհետև հերոսության մեջ արյուն կա»²։ Սակայն հետագայում, ըստ երևույթին հրաժարվելով առաջարանն օգտագործելու մարից, գրողն այլևս չի անդրադարձել նրան։

Դեմիրճյանի վեպի ձևագրերը ծածկված են բազմաթիվ ուղղումներով։ Այդ ուղղումները նա կատարել է բուն գրելու ընթացքում և հետագայում։ Այս իմաստով խորապես անհատական ընույթ ունի նրա աշխատանքը։ Հայտնի է, որ Գյոթեն գրելիս ուղղումներ չէր անում և գտնում էր, որ դրանք իրեն կաշկանդում են և թույլ չեն տալիս ստեղծագործել։ Ընդհատելով, ընդհատելով, ընդհատելով, ուղղում էր, բայց մեծ մասամբ արդեն գրված արտագրելիս, որը նա անում էր մի քանի անգամ։ Դ. Դեմիրճյանը, ինչպես երևում է վեպի ձևագրերից, գրելուն զուգակցում էր ուղղելն ու շտկելը, բացի այդ, նա այդ աշխատանքը, ինչպես ասվեց վերը, շարունակել է մնացած փուլերում, ընդհուպ մինչև վեպի հրատարակությունն ու վերահրատարակությունը։ Եվ քանի որ այդ ուղղումները նա կատարել է նույն տեքստի վրա, ուստի հաճախ, մանավանդ առանց վեպի տարրեր հրատարակություններին դիմելու, դժվար է լինում պարզել, թե դրանցից յուրաքանչյուրը երբ է կատարել հեղինակը՝ բուն գրելիս, խմբագրելիս, թե հրատարակության առիթներով։ Երբեմն, իհարկե, ձևագրի թանաքի կամ մատիտի գույնից հնարավոր է պարզել, որ ուղղումները կատարված են ոչ թե գրելու պրոցեսում, այլ ավելի ուշ, բայց ճիշտ ժամանակը որոշելը, այնուամենայնիվ, հնարավոր չէ։

«Վարդանանքի» հիմնական ձևագիրը, որ ունի «Վարդան Մամիկոնյան» խորագիրը³, վեպի հրատարակության հիմքն է դրած։ Եւ մատիտագիր է, կատարված են բազմաթիվ ջնջումներ ու փոփոխություններ և գրված նոր տողեր ու բառեր։ Սրա հետևանքով հնարավոր չէ պարզել, թե ինչն է, որ չի բավարարել գրողին և ջնջվել է։

Այս շտկումների և ուղղումների՝ մշակումների ընույթը բազմազան է։ Երոզը հաճախ կրճատում, սեղմում է տեքստը։ Հեռացնում է իրեն չբավարարող մասերը։ Թե ինչպես է նա ստեղծել տեքստը, երևում է հետևյալ հատվածից (հանվածը առնում ենք փակագծի մեջ)։ «Երևտին ու Կողակին շրնդունեց Միհրնեսը։ Ստորացումը խիստ վրդովեց Երևտին. նա չկարողացավ գնալ բանակ, ուր նրան պիտի հանդիպեր հայոց ալուրձին (վերջապես նա եկել էր Վասակի գաղտնի հրահանգներով և ուրացության կողմնակից էր, նրանց հակառակ։ Նա նոր սկսեց մտածել այն մասին, թե ինչու էր ինքը բռնել Վասակի կողմը։ Հայաստանում նա հույս ուներ այդպիսով մերձենալ արյաց իշխանության, դիրք ձեռք բերել, ապրել փառքով ու հանգիստ։ Բայց ի՞նչ դուրս եկավ այստեղ... Ահա Վրա ուրացության հատուցումը։ Անգամ չարժանանալ, որ հետը խոսեն, լսեն, թե ինչ նպատակով է եկել Պարսկաստան, Վերավորանքն խորն էր և ուսանելի)»⁴։

Ճեղքերի մեջ, լուսանցքներում կան լրացումներ, որոնք երբեմն սեղմ են, երբեմն էլ ծավալուն և երկու դեպքում էլ կական նշանակություն ունեն տեքստի համար։ Ահա նման լրացումներից մեկը, որ տրվում է ընդգծումով.

«—Սա հարցում եմ տալիս, իշխան, զորք ևս ուղարկում նրանց դեմ, թե ոչ։

—Ի՞նչ, դու...—չվերջացրեց Ատոմը խոսքը անսպասելի հանդգնության հանդիպած ու զայրանալ սկսելով, բայց եւր հայացքը վրեժից ևս առաջ առաջ առաջ մի այնպիսի երկաթե անդամադրելի հայացք, որից հասկացավ, որ եւր աչքին ոչ մի մահ առժեմ չունի»⁵։

Հաճախ Դ. Դեմիրճյանը այդ լրացումները կամ տեքստի զանազան մասերը մշակելով առանձին թղթերի վրա, սոսնձով կամ գնդասեղով փակցրել է համապատասխան տեղում։ Բուն գրելու ընթացքում գրողը երբեմն չի ամբողջացրել միտքը, այլ առաջ ընկնելով՝ գրել է այն տողերը, որոնք ավելի ուշ պետք է գալին։ Նման դեպքերում գրողը կիսատ է թողել այդ նոր տողերը, լրացրել նախորդը և ապա անդրադարձել նաև դրանց։ Ահա նման ձևագրերից մի հատված (կիսատ մնացած ու գրողի ձեռքով ջնջված տողերը առնված են փակագծի մեջ)։

² Նույն տեղում։

³ ԴԱԹ, Դեմիրճյանի ֆոնդ, № 451։

⁴ Նույն տեղում, № 457, էջ 308։

⁵ Նույն տեղում, № 463, էջ 568։

«Արսենը հանգստացավ (Արամայիդին, Միհրենբրսեհի քույրը շատ էր ազդեցիկ), Վախտանգը, ինչպես և տիկինը շատ մոտ անձնավորություններ էին Միհրենբրսեհի քրոջ՝ Արամայիդին, իսկ Արամայիդին ազդեցիկ կին էր և Միհրենբրսեհի սիրելին (և թեպետ Արսենը ամենևին սիրտ չունենր սեղան նստել այսպիսի օրերին, բայց ստիպված էր շմերժել բարի Վախտանգին)։ Նա էր, որ շատ տարիներ առաջ փրկել էր...»։ Կամ՝ «Կնահատակվի նա և չի գիշի իր խիղճը (մենք չտվինք դրա օրինակը Մենք կտանք)։ Նա էի դրա օրինակը և ես դավաճանեցի դրան»⁶։

Ձեռագրերը ցույց են տալիս, որ Դեմիրճյանը առանձնապես երկար ու տևական աշխատանք է կատարել վեպի լիզում ու ոճը մշակելու և հղկելու ուղղությամբ։ Թե ինչպիսին են այդ ուղղումները, դժվար չէ տեսնել հետևյալ հատվածում (ուղղումները և փոփոխությունները ընդգծված են)։

«Մինչև լույս անշուշտ փոփոխություններ կլինեն այլ և այլ։ Սակայն նրա հիմնական ազդեցականորդը այս է։ Ենթադրենք իմիջև են աջում և ձախում։ Իր աջում վճռել է մեղ շթողնել ներս։ Իրեն թողնել դուրս։ Միջոցը փակ է, ճահճի։ Եվ նա միջոցի ուսելը կտանի կրկին աջ։ Բայց մեղ ձգտում է միջոցում կուտակել, ապա քաշել իրեն, թեև վրա բերել, գրկել, ճգմել։ Զգույշ թևերում...»⁷։

Երողը հաճախ հիմնովին փոխել է նախադասությունների կառուցվածքը, այս կամ այն մասը հետ կամ առաջ տարել, այդ նպատակով դնելով պայմանական նշաններ, ցույց տալով տեքստի հաջորդականությունը։ Ձեռագրերից մեկի (N 457, էջ 199) վրա Դեմիրճյանը գրել է. «Նախ՝ 200, ապա՝ 199 էջը»։ Այս էջերի դասավորությունը կատարվել է ոչ թե մեխանիկորեն, այլ ներքին իմաստի թելադրությամբ։ Մի այլ տեղ (N 451, էջ 319), ուր նկարագրվում է Վարդանի և Արծվի գիշերային այցը խոստովանյաց գղյակ, պայմանական նշաններով շտկված է տեղի վերաբերյալ տեքստի փաստական անճշտությունը։

Զբաղարարվելով ձեռագրերի մշակումով, Ե. Դեմիրճյանը շատ փոփոխություններ է կատարել «Վարդանանքի» առաջին հրատարակության տպվածքների վրա։ Այս իմաստով տպվածքները դառնում են գրողի ձեռագրերի վրա կատարված աշխատանքի շարունակությունը։ Տպվածքների վրա կատարվել են փաստական բնույթի շատ փոփոխություններ ու լրացումներ։ 11 հատորի հրատարակության համար հիմք հանդիսացած ձեռագրում (էջ 112—148) եղել է մի ընդարձակ տեսարան, ուր նկարագրվում էր Ավետիք բերդապահի այցը Դենշապուհին, Վեհմիթին, Որմիդդին, ապա՝ վերջիններիս խոսակցությունը գյուղացիների հետ, որոնք հրաժարվում են հարկերից։ Սրբազրական տպվածքների վրա այս տեսարանը հիմնովին փոխվել է։ Ավետիք բերդապահը խոսում է կտրուկ և սեղմ, հրաժարվելով Դենշապուհի կարգադրությունները կատարելուց։ Ուժեղացված է պարսից ծանր հսրկահանության դեմ հայ գյուղացիների ըմբոստության պատկերը։ Փոխվել են գործող անձերի անունները՝ Սեդրակը դարձել է Սենեքերիմ, անանուն շինականը՝ Սահակ, ավելացել է գինվոր Պողոսի անունը։ Վերջինիս ղեկավարությամբ պարսից հարկահանների դեմ ցասմամբ լցված գյուղացիները հեռանում են լեռները։ Տպվածքների վրա հեղինակը կատարել է անհրաժեշտ կրճատումներ, սեղմել է տեքստը, հեռացրել առանձին ձգձգված մասերը։ Մշակելով Գեղեճի և պարսկասեր հոսանքին հարող Ջանգակ երեցի հանդիպման տեսարանը, Դեմիրճյանը հանել է ճաշասեղանի օրհնելու հետևյալ նկարագրությունը. «Ջանգակ երեցը մնաց ճաշին, որ հրամցրին նրան սրահում։ Գեղեճը սպասեց, որ նախ՝ երեցը նստի սեղան, որից հետո Շուշանիկ տիկինը հրավիրեց նստելու, ապա ինքը Արշալույս տիկնոջը թույլ տվեց։ Սպասեց, որ Լրեցը սեղանն օրհնի։ Բայց երեցը հակամետ չէր կատարելու այդ նախնյաց սովորությունը։ Այն ժամանակ Գեղեճը շարացած նայեց նրան և կոշտ ձայնով ասաց. —Օրհնիր սեղանը... Ջանգակ երեցը օրհնեց։ Գեղեճը շրջվեց դեպի նա. —Բեր աջը... Առավ երեցի աջը համբուրեց, և երեսը խաչակնքելով սկսեց ուտել»⁸։

Վերը հիշված տեսարանից հանված է Գեղեճի և երեցի մի զրույցը, որից պարզվում են վերջինիս հակահայրենասիրական տրամադրությունները և պարսկական կողմնորոշումը։ Մի այլ տեղից հանված է Զոհրակի և շինականների հանդիպման նկարագրությունը, ուր ընդգծվում է Զոհրակի համակրական վերաբերմունքը ժողովրդի մարդկանց նկատմամբ («Սրա նմանների հետ արդեն կրակից-ջրից կանցնի մարդ»)։⁹ Անհրաժեշտ է կրճատվել Վարդանի և Աթուրի բանակ-

6 Նույն տեղում։

7 Նույն տեղում, էջ 252։

8 ԳԱԹ, Դեմիրճյանի ֆոնդ, N մաս 2-րդ, էջ 6։

9 Տե՛ս նույն տեղում, 2-րդ մաս, էջ 94—96։

ցությունների տեսարանը, ուր հոների առաջնորդը առավել կենդանի էր ստացվել, երևալով իր հակասություններով ու տատանումներով, բան թե վերջնական տեքստում: Ահա հանված մասերից մեկը. «—Որքան մեծ զորքի համար,—հարցրեց Աթուր, ողջ պալատական իշխանների գերակշիռ հետաքրքրությունը զարթոցնելով:—Ամենափոքրից միևնույն ամենամեծ զորքի համար,—պատասխանեց Վարդանը անհանգստացնելով ոչ միայն բյուզանդացիներին, այլև իր ուղեկից հայ իշխաններին:—Դու մտածո՞ւմ ես այդ ասելով,—դիպավ Աթուրը Վարդանին:—Դու գիտե՞ս, ինչու ենք դուրս եկել մեր աշխարհներից և մտնում այլ աշխարհներ: Մենք էլ ունենք մեզ հալածող թշնամի: Նա ուժեղ է ամենաուժեղից: Ավագը, անապատների զավակներ ենք մենք, և ապրել ենք ավազում: Մենք գնում ենք զորքով ու բնտանիքով: Գնում ենք ապրելու, իսկ դու կատակ ես անում, ասելով՝ «Միևնույն ամենամեծ զորքը»: Կարող եմ հինգհարյուր հազարով անցնել ձեր երկիրը միևնույն Բյուզանդիա»:

Բոլորը շունչները պահեցին»¹⁰:

Տպվածքների վրա կատարված են յեզվա-ոճական ուղղումներ ու շարկումներ, որոշ դեպքերում լրացվել են տեքստերը, ճշտվել ու բնորոշվել բառերը: Նախնական տեքստում եղել է. «Իշխան, հարցում տամ քեզ և տուր ինձ պատասխան. ո՞վ է մեր տերը»: Վերամշակելիս՝ Դեմիրճյանը լրացրել է այս նախադասությունը, վերացրել տեքստի անորոշությունը. այսպես՝ «—Իշխան հարցում տամ քեզ, տուր ինձ պատասխան: Չեմ հասկանում, քե՛ս Սամիկոնցից տերը քողել է մեզ... Իսլաց Երե քողել է մեզ, ո՞վ է մեր տերը»¹¹: Երբեմն էլ նա փոխում է տեքստի այս կամ այն մասը, մտցնում նոր մոմենտներ, մանրամասներ: «Առաջին անգամ նա (Վարդանը) կյանքում կորցրել էր իրեն: Առաջին անգամ նա խալում էր իրեն, և ուրիշներին, կեղծում, խարդախում: Նա զգում էր խղճի այնպիսի խայթ, այնքան ամոթանք: Նախնական այս տեքստը նա մշակել է այսպես. «Առաջին անգամ կյանքում նա տալիս ունի էլ այնպիսի անսովոր մի հոգեկան արհամարհանից: Առաջին անգամ էր տեսնում, որ մարդիկ խալում են իրենց և ուրիշներին, կեղծում, խարդախում: Նա զգում էր այնքան ամոթանք»¹²:

«Վարդանանքի» ձեռագրերը խոսում և վկայում են այն բանի, թե ինչպիսի մեծ աշխատանք է կատարել Դ. Դեմիրճյանը՝ հղկելով ու կասարելագործելով իր այդ սքանչելի ստեղծագործությունը:

Ա. ԲԱՂԿԱՍԱՐՅԱՆ

ԿԱՐԻՆԻ «ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅՐԵՆՅԱՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

XIX դարի 80-ական թվականների արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների պատմության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, որը սկզբնապես թուրքական բռնակալության դեմ հայ ժողովրդի վերսկսած պայքարի նոր շրջանը:

«Պաշտպան հայրենյաց» կազմակերպության մասին բավական հանգամանալից տեղեկություններ կան ժամանակի հայ, որոշ շափով նաև օտար և եվրոպական մամուլի էջերում: Ավելի ուշ (1905 թ.), հուլիսի կարգով նրա գործունեությանն են անդրադարձել Բ. Մելիք-Գրիգորյանը և Հ. Նշկյանը: Ապա գիտական հոդվածով հանդես եկավ Սարգսյանը «Գործ» ամսագրի 1917 թ. № 3-ում: Հ. Նշկյանի հուշագրությունները, «Առաջին կալիքը» վերնագրով, առանձին գրքույկով հրատարակվեցին 1930 թ.: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Մ. Սրմսյանի «Խոհ և խոսք» աշխատությունում եղած մասը, բայց արժեքավոր էջերը:

Սովետահայ պատմագրության մեջ «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության պատմությանը համակողմանիորեն անդրադարձել է պրոֆ. Մ. Ներսիսյանը իր «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնակալության դեմ» աշխատության մեջ: Հեղինակը ինչպես ժամանակի մամուլի, այնպես էլ արխիվային փաստաթղթերի (այդ թվում՝ Տիգրան Կերեքյանի

¹⁰ Նույն տեղում, էջ 438—439:

¹¹ Նույն տեղում, էջ 25:

¹² Նույն տեղում, էջ 433: